ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, քարտուղարություն, հեռ. 596-125

N 27/113 «09» 02 2021 թ.

Ձեր

« ՌՈՅԱԼՋՈՒՐ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ (ՀՎՀՀ 02643237)
Ք.Երևան, Բագրևանդ 88/9,
էլ. հասցե՝ vladimiraghajanyan1960@gmail.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ ոստիկանության և «ՌՈՅԱԼՋՈՒՐ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ-ի միջև 16 դեկտեմբերի 2020թ.-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13-2 ծածկագրով անխափան սնուցման աղբյուրների ձեռք բերման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «ՌՈՅԱԼՋՈՒՐ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ -ն ստանձնած պարտավորությունները չի կատարել, մասնավորապես՝ չի ստորագրել և սահմանված ժամկետում չի ներկայացրել ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13-2 ծածկագրով պայմանագրի համաձայնգիր 1-ը և չի մատակարարել 50 հատ անխափան սնուցման աղբյուրներ, որի ընդհանուր գումարը կազմում է 588 000 (հինգ հարյուր ութսունութ հազար) ՀՀ դրամ :

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն

Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ապրանքի մատակարարման ժամկետը խախտվել է:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և «ՌՈՅԱԼՋՈՒՐ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ-ի միջև 16.12.2020թ.-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13-2 ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

«ՌՈՅԱԼՋՈՒՐ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ -ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին:

Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերը՝ պայմանագրի ապահովում և որակավորման ապահովում, սահմանված կարգով, կներկայացվի **«Ամերիաբանկ»** ՓԲ ընկերություն՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները՝ 583 000 /հինգ հարյուր ութսունութ հազար/ ՀՀ դրամ և 58 800 /հիսունութ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N900005000758 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Հարգանքով՝
Ոստիկանության գնդապետ **Վ.Մովսիսյան**

Կատարող՝ Հ. Մաստոյան
Հեռ. 56-32